

ԵՐԱԺԾԱԲՈՒԺՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՄԵԶ¹:

Հոգին երաժշտութեամբ կեայ
(Պիւթագորաս Ասմոսացի, մ. թ. ա. Զ դար)²

Անտիկ աշխարհի նշանաւոր փիլիսոփայի այս պերճախօս ասոյթը վկայում է այն մասին, թէ հնում մեծագոյն մտածողները որքան էին կարեւորում երաժշտութեան դերը մարդու հոգեւոր կեանքում:

Հանրայայտ է, որ արուեստի բոլոր տեսակներն էլ հսկայական ներգործութիւն ունեն մարդու ներաշխարհի վրայ, սակայն

¹ Սոյն թեմայով հեղինակը բազմիցս հանդէս է եկել գեկուցումներով եւ լոյս ընծայել հիմնաղրոյթներ, այդ թուում՝ ԱՐՓԻ ՎԱՐԴՈՒՄՆԵԱՆ, Երաշրժտութեան ազդեցութիւնը մարդու առողջութեան վրայ, Հայ ժողովրդական մշակոյթ, Համբաւական գիտական նախաշրջան, IX, Զեկուցումների հիմնաղրոյթներ, Երեւան, 1997, էջ 62-64. Ա. Դ. Վարդումյան, Музыкатерапия в армянских средневековых рукописях (Պատկերացումները երաժշտարութեան մասին հայոց միջնադարեան ձեռագրերում), тезисы докладов международной конференции (Музыкальная культура в преддверии XXI века – Тиграновские чтения), Ереван, 1998 с. 6-8: ԱՐՓԻ ՎԱՐԴՈՒՄՆԵԱՆ, Մտորումներ երաժշտարութեան մասին, Երաժշտական բերապիայի I համահյական գիտաժողովի թեզեր (The First Armenian Symposium For Music-Thearapy, Theses), Երեւանի կոմիտասի անուան Պետական Կոնսերվատորիա, Երեւան, 1999, էջ 26. Ա. Դ. Վարդումյան, Музыкатерапия как способ лечения искусством, Академия наук Грузии, Комиссия по научному сотрудничеству по странам Кавказа и т. д., Тбилиси, с. 216-217. ARPI VAR-DUMYAN, Music-Thearapy in Medieval Armenia, Proceedings of the 21st International Congress of Byzantine Studies, Volume III, Abstracts of Communications, London, 21-26 August, 2006, p. 119-120:

² Հ. ՄԻՆԱՍ ԲԺՇԿԵԱՆ, Երաժշտութիւն որ է համառու տեղեկութիւն երաժշտական սկզբանց կենէջութեանց եղանակաց եւ նշանագրաց խազից, 1815, աշխատասիրութեամբ Արամ Քերովբեանի, Երեւան, 1997, էջ 61, 76 (էջ 64ում Քերոնչեալ բնարանը հետեւեալ կերպ է մեկնարանւում). ինչպէս կը պատմէ Դաւիթ Անյաղը փիլիսոփայն, Պիւթագորեանք կ'ըսէին, թէ հոգին երաժշտութեամբ կ'ապրի:

դրանցից իւրաքանչիւրի ազդեցութիւնը միանգամայն ուրոյն է: Ի տարբերութիւն արուեստի այլ տեսակների, որ տարածական բնոյթի են եւ ընկալուում են տեսողութեան միջոցով, երաժշտութիւնն ունի ժամանակային բնոյթ եւ ընկալուում է լսողութեամբ: Եւ քանզի այն անտեսանելի ու անշօշափելի է, համարուում է արուեստներից ամենավերացականն ու աննիւթականը, ուստի եւ ամենամօտը անձի հոգեկան ու հոգեւոր ոլորտին: Այս հանգամանքն էլ հէնց պայմանաւորում է երաժշտական արուեստի առաւել անմիջական ազդեցութիւնը եւ՝ անհատի, եւ՝ մարդկանց խըմբի հոգեկան աշխարհի վրայ:

Երաժշտութեան բարերար ու բուժիչ յատկութիւնները յայտնաբերուել են դեռեւս մարդկութեան պատմութեան վաղնջական ժամանակներում: Դրանք արծարծուել են հնդկական հնագոյն վեղաներում, յունական անտիկ մտածողների տրակտատներում, ինչպէս նաեւ հեռաւորաբեւելեան փիլիսոփաների երկերում: Հայոց մէջ նոյնպէս երաժտութեանը հնուց անտի բարձր համարում ունէր հասարակութիւն տարբեր շերտերում: Դեռեւս նախաքրիստոնէական ժամանակներում այն որոշակի դեր էր կատարում թէ՝ ժողովրդի լայն զանգուածների առօրեայ կեանքում, թէ՝ արքունի վերնախաւի շքեղ հանդիսութիւններում: Երաժշտական արուեստի հրաշագործ յատկութիւններն օգտագործուում էին նաեւ հեթանոսական տաճարային ծէսերում, ուր քրմական արարողութիւններն ուղեկցուում էին հայայական ուիթմիկ մեղեղիներով ու մողական պարերով: Ազգագրագէտները հաւաստում են, որ աւանդական բժշկութեան մէջ այս սովորոյթը յարատեւել է մինչեւ մեր օրերը, որոշ վայրերում վերածուելով ծիսական արարողութիւնները³:

Հնում երաժշտութեանն ու պարին վերագրուում էին նոյնիսկ գերբնական յատկութիւններ, որոնց արձագանքները հասել են մինչեւ 19-րդ դարակզբի հայկական իրականութիւն:

Վենետիկի Մխիթարեան միաբանութեան անդամ հ. Մինաս Բժշկեանը 1815-ին իր «Երաժտութիւն...» աշխատութիւնը եզրափակող «Յաղագս զօրութեան երաժշտութեան» վերջաբանում

³ ՍՏԵԼԱ. ՎԱՐԴԱՆԵԱՆ, Հայաստանի բժշկութեան պատմութիւն (Հնագոյն ժամանակներից մինչեւ մեր օրերը), Երեւան, 2000, էջ 22: Բուժումը կայանում է հետեւելում. Հիւանդը լսում է յատուկ ուիթմիկ մեղեղիներ եւ մասնակցում մողական պարերին:

գրում է. «Երաժշտութեան ուժը եւ եղանակներուն ազդեցութիւնը քանի⁹ օգաւոր ըլլալը՝ յայտ է ամէն մարդու, որ ինչպէս յառաջարանութեան մէջ ըսկիմք, մարդուս սիրտը շարժելով, ոչ միայն արթնութիւն կու տայ, այլ եւ զերմեռանդ եւ աստուածապաշտ կ'ընէ. եւ այս պատճառով գտնուեցաւ երաժշտութիւնը: Բայց թէ ինչո՞ւ այսչափ զանազան եղանակներ հնարուեր են որ այլ եւ այլ ազդուութիւն ունին եւ կերպ կերպ մարդը կը շարժեն. որովհետեւ, ամէն մարդու խառնուածքը զանազան ըլլալով՝ ախորժակն ալ զանազան է. եւ վասն զի, ախորժակը կախուած է ջիղերուն մէջի հիւրերէն եւ ջիղերուն շարժմունքէն, ուստի, երաժշտական եղանակները անոր համար կ'ազդեն յախորժակս հոգւոյն. վասն զի կը շարժեն զջիղերը եւ ոգիքները ըստ իւր տրամադրութեան: Ասով է, որ երբեմն խիստ կը դպչի (կ'ազդէ). երբեմն կ'ուրախացնէ եւ երբեմն կը տրտմեցնէ. եւ շատ անգամ ուժ եւ առողջութիւն կու տայ ջիղերուն. ինչպէս Դաւիթ մարգարէին տալիդին ձայնովը, մելամաղանու Սաւուիին հոգին կ'արթնեար եւ խելքը գլուխը կու գար (Ա. Թագ. ԺԶ, 23): Բնարանները կը պատմեն, թէ բարանքոյա թունաւոր կենդանին, երբ կը խայթէ մարդը, նախ՝ կը տրտմի, ապա՝ չարաչար կը հեւայ եւ կ'իյնի կը մարի մարդը: Բայց, երբ որ կը լսէ բնարին ձայնը եւ անուշ եղանակը, կը սկսի մատը շարժել, ապա կամաց կամաց բոլոր մարմինը եւ ապա, վեր կը ցաքէ այն ձայնովը, կը սկսի խաղալ. այնչափ որ՝ յոգնի կ'իյնի եւ կը բրտնի. եւ այսպէս՝ քանի մի անգամ ընելով կ'առողջանայ: (Այս նկարագրութիւնը առնուած է Athanasius Kircher-ի Magnas sive de arte magnetica գրքին, Հռոմ, 1641)»⁴: Ինչպէս երեւում է այս մէջբերումից, երաժշտութեան բուժիչ ազդեցութիւնն ուռածացնելով դրան վերագրուել է նաեւ տարանտուլ՝ կոչուող թունաւոր սար-

⁴ Տե՛ս Հ. ՄԻՆԱՍ ԲԺՇԿԵԱՆ, էջ 149: Աթանազիուս Կիրիսեթի՝ լատիներէն 10 գրքերից իններորդում է այս նկարագրութիւնը: Սրանցից առաջին երեքը 1780-1800 թթ. հայերէն է թարգմանել Վիեննայի Միխիթարեան միաբանութեան անդամ Հ. Անտոն Ուչգարտաշեանը (տե՛ս Ա.ՐՓԻ ՎԱՐԴՈՒՄԵԱՆ, Վիեննայի մատենադարանի «Մատեան երաժշտականութեան» ձեռագիրը որպէս ուշ միջնադարեան երաժշտագիտական-բարգմանական աշխատութիւն, Բանքեր Մատենադարանի, № 16, երեւան, 1994, էջ 131-149).

⁵ Тарантул (ит. tarantola, по названию г. Таранто в Италии). Крупный ядовитый паук южной Европы..., живущий в земле. Այս մասին տե՛ս նաեւ Հ. ՄԻ-

դի խայլոցից ամոքելու հրաշագործ յատկութիւն⁶: Սակայն ընդհանուր առմամբ երաժշտութիւնը դիտում է որպէս մարդու ջղերի եւ հոգեվիճակի վրայ անմիջականօրէն ներգործող զօրեղ արուեստ:

Քաղաքակիրթ մարդկութեան բազմադարեայ գիտելիքների հանրագումարը գրաւոր աղբեկաններով հայ իրականութիւն է ներթափանցել հին յունական փիլիսոփայական երկերի թարգմանութիւնների միջոցով: Յունաբան թարգմանչական դպրոցի խոշորագոյն ներկայացուցիչ Դաւիթ Անյաղթը, ստեղծագործաբար զարգացնելով անտիկ եւ հելինիստական մտածողների ուշագրաւդաղափառները, հայոց միջնադար ներմուծեց իր ժամանակի ամէնից առաջադէմ փիլիսոփայական եզրայանգումները: Յայտնի է, որ երաժշտութիւնը դասւում էր քառեակ գիտութիւնների (կուագրիկիումի) կարգին՝ ի թիւս թուաբանութեան, երկրաչափութեան եւ աստղագիտութեան, իսկ հմուտ երաժիշտներն ու երաժշտապետերը մեծարւում էին փիլիսոփայ,⁷ իմաստուն կամ իմաստաեր տիտղոսով:

«Սահմանք իմաստասիրութեան» երկում Դաւիթ Անյաղթը շարադրել է Ալեքսանդր Մակեդոնացու մասին յիշարժան մի պատում, ուր ընդգծում է երաժշտութեան անդիմադրելի ազդեցութիւնը հին աշխարհի մեծագոյն զօրավարի վրայ. «Եւ պարտ է գիտել, թէ մեծ է զօրութիւն երաժշտականին, պէսպէս կրիստոնեանով զիոնին եւ տրամադրելով, որպէս յայտ առնեն մըրմունք եւ ողբք, ըստ իմբեանց տրամադրելով զիոնին: Որպէս վիպասանեալ է ոմանց վասն Ալեքսանդրի, թէ ի խրախութեան ելով, երաժիշտն զպատերազմականն նուագէր զմատն, եւ նա իսկոյն զիմեալ արտաքս դիմեաց: Իսկ դարձեալ ե-

ՆԱՍ ԲԺՇԿԵԱՆ, ինչպէս եւ՝ Ա.Դ. ՎԱՐԴՈՒՄԵԱՆ, Գրախօսութիւն. «Հ. ՄԻՒՍՍ ԲԺՇԿԵԱՆ, Երաժշտութիւն որ է համառու տեղեկութիւն երաժշտական սկզբանց եկեղութեանց եղանակաց եւ նշանագրաց խազից, 1815, աշխատասիրութեամբ Արամ Քերովքեանի, Երեւան, 1997» գրք.՝ Պատմա-բանասիրական հանդէս, 1998, №1-2, էջ 269:

⁶ Ուշագրաւ է, որ «տարանտելլա» պարի անունը նոյնպէս ծագել է իտալական Տարանտո քաղաքի անունից (ՀՍՀ, հտ. 11, Երեւան, 1985, էջ 612), եւ քանի որ այդ պարը նման է խայլուածի շարժումներին, չի բացառում, որ տուեալ պարեղանակը յօրինուած լինի այդ իսկ նպատակով:

⁷ Ն. Կ. ԹԱՂՄԻԶԵԱՆ, Գրիգոր Նարեկացին եւ հայ երաժշտութիւնը Ե-ԺԵ. դդ., Երեւան, 1985, էջ 39. :

բաժշտին գուրախականն բախեալ գնուագս, նա անդրէն դարձեալ ի բազմականս նեմէր⁸:

Հնօրեայ այս պատումը Դաւիթ Անյաղթը լսել էր հաւանաբար Ալեքսանդրիայում, ուսումնառութեան տարիներին: Սա այնքան տարածուած է եղել հայոց միջնադարում, որ տեղ է գրաւել նաեւ Նոր Հայկազեան բառարանում՝ «Երաժիշտ», բառի իմաստի բացատրութեան մէջ⁹, ինչպէս նաեւ ժգ. դարի ականաւոր փիլիսոփայ, բնագէտ, քերական, բանաստեղծ, երաժիշտ եւ բժիշկ Յովհաննէս Պլուզ Երզնկացու «Մեկնութիւն քերականի», նշանաւոր երկում¹⁰: Այն համաշխարհային մեծագոյն մտածողների եւ իր անմիջական նախորդների երկերում առկայ ուշագրաւ տեսութիւնների մի բազմաբնոյթ հանրագումար է, որ վերարծարծում է ոչ միայն քերականութեան, այլեւ փիլիսոփայութեան, բնագիտութեան, բժշկութեան, երաժշտութեան ու երաժշտաբուժութեան բնագաւառի մի շարք խնդիրներ, որոնք անքակտելիօրէն փոխկապակցուած են միմեանց:

Այս աշխատութեան գաղափարը Յովհաննէս Պլուզ Երզնկացին յղացել է Հռոմէկալայում, որն իր ժամանակ հայոց կաթողիկոսական բազմամեայ նստավայրն էր Կիլիկիայում, ինչպէս նաեւ ուսումնագիտական-մշակութային խոշոր կենտրոն: Մինչեւ իր երկի գրի առնելը նա բանաւոր կերպով բազմիցս ներկայացրել էր այն Հռոմէկալայի կաթողիկոսական դպրատան աշակերտութեան ուշագրութեանը եւ արժանացել բարձր գնահատանքի: Հէնց Կիլիկիոյ կաթողիկոս Յակոբ Ա. Կլայեցու առաջարկով էլ Երզնկացին գրի է առել այն 1293-ին եւ նոյն տարում կնքել իր մահկանացուն: Աշխատութեանս վերնագրում առկայ «Քերական»-ը յոյն նշանաւոր քերական Դիոնիսիոս Թրակացին է (մ.թ.ա. Բ-Ա. դդ.), որի «Քերականական արուեստ» երկը Բիւզանդիայում դարեր շա-

⁸ ԴԱ.Ի.ԻԹ ԱՆՁԱՂԹ, Սահմանէ իմաստափրեան, Համահաւաք քննական բնագիրը, թարգմանութիւնը գրաբարից ուսուերէն, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները Ա. Ս. Արեւշտեանի, Երեւան, 1960, էջ 134 (15, 20):

⁹ Նոր բառագիրք Հայկազեան լեզուի, 4. ա, Վենետիկ; 1836, էջ 666:

¹⁰ ՅՈՎՀԱՆՆԻՍ ԵՐԶՆԿԱՑԻ (1230-1293 թք.), Հաւաքումն մեկնութեան բնականին, աշխատափրութեամբ՝ Բ.Գ.Դ. Պրոֆ. Լ.Գ. Խաչերեանի, Լու Անճելըս, 1983 թ., էջ 134 (15, 20): Նաեւ՝ Արմենուի Երզնկացի Սրբական, Յովհաննէս Երզնկացի Պլուզ (Կեանքը եւ գործը), Երեւան, 1993, էջ 117:

րունակ գործածուել է որպէս ձեւաբանութեան դասագիրք՝ ընդհուպ մինչեւ ժֆ. դարը¹¹:

Ե. դարում կատարուած հայերէն թարգմանութիւնը մեկնաբանել եւ կիրառել են միջնադարի մի շարք հայ քերականներ, եւ շուրջ մէկ հազարամեակի ընթացքում կատարուած մեկնութիւնների պսակը կազմում է Յովկաննէս Պլուզի խնդրոյ առարկայ աշխատութիւնը, որը սոսկ մեկնաբանական կամ բանափաղուած բնոյթի աշխատութիւն չի կարելի համարել։ Այն գիտական բարձր մակարդակով իրագործուած համահաւաք ուսումնասիրութիւն է, որում ի մի են բերուած մինչ այդ յայտնի քերականական բազմաթիւ արժէքաւոր գործեր, վերացուած են հնարաւոր կրկնութիւնները եւ համակարգուած բազմաթիւ սկզբնաղբիւրները։ Պատահական չէ, որ այն կոչւում է նաեւ «Հաւաքումն քերականի մեկնութեան»։

Սա իր ժամանակի համար մի նշանակալից առաջընթաց քայլ էր, որով երզնկացին գերազանցել է նոյնիսկ իր հոգեւոր ուսուցչին՝ հռչակաւոր Գրիգոր Մագիստրոսին, եւ որի աշխատութեան համեմատ երզնկացու երկը ծաւալով գրեթէ կրկնակի է, իսկ բովանդակութեամբ՝ առաւել հարուստ եւ յղկուած։ Ընդորում, երզնկացին բարեխղճօրէն եւ համեստօրէն խոստովանում է, որ իր սեփական ներդրումը լոկ մասնակի բնոյթ է կրում այս երկում։ Սակայն դա բնաւ չի նսեմացնում նրա աշխատութեան հեղինակային արժէքը։ Ի վերջոյ, նրա նպատակը եղել՝ է իր յաջորդների համար դիւրացնել այս երկի բուն ակունքներից սնուելու գործընթացը, վերամշակելով ու հրամցնելով իր նախորդների ամբարած գիտելիքների հարուստ շտեմարանը։

Եւ սա հէնց այն աշխատութիւնն է, որի գրչագրերից մէկը կջմիածնում գրաւել է Կոմիտաս վարդապետի ուշադրութիւնն ու առիթ դարձել նրա վերջին տպագիր յօդուածի համար։ Դա մի հակիրճ, սակայն շատ հետաքրքիր հրապարակում է, վերնագրուած «Բժշկութիւն երաժշտութեամբ», որ լոյս է տեսել Կոստանդնուպոլսում, Թէոդիկի «Ամէնուն տարեցոյցը» պարբերականի մարտ ամսի համարում¹²։ Սրանով Կոմիտասը փորձել է իր ժամանակակիցների հետաքրքրութիւնը յարուցել երաժշտաբուժութեան հանդէպ, նորովի ներկայացնելով միջնադարից յետոյ

¹¹ ՀԱՀ, հ. 3, էջ 396.

¹² Թէ՛ՌԴԻԿ, «Ամէնուն տարեցոյցը», Կ. Պոլիս, 1915, էջ 242-46.

գրեթէ մոռացութեան մատնուած հնօրեայ աւանդոյթի հիմունքները։ Նա գրում է. «Հին աշխարհի իմաստուն-երաժիշտներն այնքան իորութեամբ են ուսումնասիրել ու զարգացուցել իրենց ժամանակի երաժշտութիւնը, որ գրեթէ բռորդադար գաղտնիքները երեւան են հանել։ Արդ, օգուտ քաղելով, գլխաւորաբար մայր Աքոնի համար 2359 ձեռագրեն, լուսաբանելու ենք՝ թէ ի՞նչ իման վերայ եւ ի՞նչպէս էին երաժտութեամբ հիւանդներ բռւժում»¹³։

Հարկ է նշել, որ Կոմիտասը նոյնիսկ չի հասցրել պարզել, թէ իր ձեռքի տակ եղած ժողովածուի յիշատակարանում թուարկուած հեղինակներից յատկապէս ո՞րի գրչին է պատկանում այս մէկը, քանի որ սոյն յօդուածում ի սպառ բացակայում է որեւէ հեղինակի անուն։ Ըստ երեւոյթին Կոմիտասը տուեալ դէպքում առանձնապէս չի կարեւորել խնդրոյ առարկայ երկի հեղինակային պատկանելութեան հանգամանքը։ Նշելի է նաեւ այն, որ Կոմիտաս վարդապետը երաժշտութեան բարերար ներգործութեան մասին խօսելիս հաւասարապէս ընդգծում է թէ՛ հոգեւոր, եւ թէ՛ աշխարհիկ երաժշտութեան դերը։ «Երաժշտութիւնը երկու տեսակ է՝ «աստուածային եւ մարդկային»։ առաջինը երգում են եկեղեցիներում՝ յանցաւոր հոգիները դէպ ի զղումն ածելու եւ մեղաւոր մտքերը՝ դէպ ի բարին փոխարկելու։ իսկ մարդկայինը՝ ուրախութեան ժողովներում ու հանդէսներում»¹⁴։ Եւ եթէ երաժշտութիւնն այսպիսի էական ազդեցութիւն ունի մարդու հոգեկան աշխարհի եւ տրամադրութեան վրայ, ապա «ինչու չը պէտք է կարողանար եւ վանել հիւանդութիւնները»-հռետորկան հարց է տալիս Կոմիտասը եւ ինքն էլ պատասխանում. «հները փորձեցին եւ գտան «զի օգտակար է ի պէտս թժկութեան», ուստի եւ որոշեցին ու գործադրեցին, որ «երգեն առ հիւանդս», որովհետեւ «որպէս ըմպելիք դեղույ ընդ նաշակելիսն» ազդում են հիւանդութեան վրայ «եւ սա (երաժշտու-

¹³ Անդ, էջ 242։

¹⁴ Անդ. Նշուած ձեռագիրը ներկայումս պահւում է Մաշտոցի անուան Մատենադարանում (այսու.՝ ՄՄ) եւ կրում է 2380 համարը։ Այն 1635-ին իշմանում ընդօրինակուած մի ժողովածու է, որի խնդրոյ առարկայ հատուածը Յովհաննէս Պլուտ Երգնկացու «Մեկնութիւն քերականի» աշխատութիւնն է եւ որի գիտաքննական բնագիրը կոչւում է «Հաւաքումն մեկնութեան քերականի»։

թիւնը) ընդ լսելիսն»¹⁵: *Այսպիսով, երաժշտութիւնը նոյնպէս համարում է իւրատեսակ մի դեղ, որն ազդում է անմիջականօրէն մարդու հոգու վրայ՝ լսողութեան միջոցով, այսինքն, այն գրեթէ նիւթականացում է:* *Սակայն միւս կողմից, մէջբերելով երգընկացուն, կոմիտասը եւս հաստատում է.* «Քանի որ «ձայնն անմարմին է եւ մեծ զօրութիւն ունի եւ ազգակցութիւն առ հոգին», ուրեմն եւ «ընդունելով հոգի զուարճական կիրք, ներգործէ առ մարմին եւ տրամադրեալ փոխէ զնա յիւրմէ բնութենին»¹⁶:

Այստեղ խիստ ուշագրաւ է «զուարճական կիրք» արտայայտութիւնը, որի հիմքում ընկած է աֆեկտների միջնադարեան տեսութիւնը՝ լատիներչն affectus բառից, որը եւ նշանակում է կիրք կամ յուզմունիք¹⁷: *Տուեալ համատեքստում այն «զգացմունիք» իմաստն ունի, որն առաջանում է երաժշտութեան դրական ներգործութեամբ:* *Այնուհետեւ կոմիտասն անդրադառնում է երաժշտական անտիկ գործիքներին, որոնց միջոցով հնում բուժում էին մարդկանց.* «Հին ժամանակների ընդհանրացած նուագարանն էր քնարն իր բազմազան տեսակներով. «այլ չորք աղեանն քնար առաւել ցուցանէ զգօրութիւն արուեստիս», մէջբերում է նա երգնկացուն: Խոսքը չորեքաղեան քնարի մասին է, որն իր «քամբ, թաւ, սոսկ, զիլ» անուանուած լարերով առաւել յարմար է համարուել բժշկութեան համար, եւ որ չորս տարրերն է խորհրդանշում, այսպէս. «Ըստ հնոց, «չորս տարրերն են՝ հոդ, ջուր, օդ՝ եւ հուր», ըստ որում հողը խորհրդանշում է երկրը: «Երկիրն ծանր է քան զգուրն. եւ զուրն՝ քան զօդ. եւ օդն՝ քան զիուր: Եւ իւրաքանչիւր տարրեր ունին կրկին որակութիւն. այսինքն՝ գոյացական եւ պատճառական: Զի երկիրս ցուրտ է եւ չոր. եւ զուր՝ գէջ եւ ցուրտ. օդ՝ չերմ է եւ գէջ. հուր՝ չոր եւ ջերմ», Բայց, մարդն ի՞նչ խորհրդաւոր կապ կարող է ունենալ քնարի լարերի անուան դիրքին եւ որակի հետ: Ըստ երեւոյթին՝ լոկ քուական. այսինքն՝ մարդն ստեղծուած է չորս տարրերով. քնարն ունի չորս լար եւ համապատասխան

¹⁵ Թէ՛ՌԻՒԿ, էջ 242.

¹⁶ *Սրանք կրկնակի մեջբերումներ են, որտեղ չակերտների մէջ առնուած են երգնկացուց կոմիտասի կատարածները:* Տե՛ս Թէ՛ՌԻՒԿ, էջ 243.

¹⁷ *Անդ:* Տե՛ս նաեւ Ա. Մակեդոնացու մասին մեջբերման պէսպէս կիրիք արտայայտութիւնը:

չորս անուն. չորս տարերք ունին չորս դիրք եւ չորս որակ: Բայց, իսկապէս, էական ու կարեւոր կապակցութիւն կայ այդ բռլորի մէջ փոխադարձարար եւ երաժշտութեամբ քժշկութեան մէջ, գրում է Կոմիտասը, ընդգծելով 4 թուի յատուկ դերը¹⁸: Դեռեւս Պիւթագորասի ժամանակներից չորս թիւը առանձնայատուկ խորհուրդը ունէր, մասնաւորապէս՝ $1+2+3+4=10$ հաւասարումով այն ձեռք էր բերում առաւել խորհրդանշական յատկութիւններ, քանի որ այն ընկած էր պիւթագորականների տասնակարգեան համակարգի հիմքում¹⁹:

Գիտականօրէն բացատրելով երաժշտական արուեստի նշանակութիւնը, վերջիններս այն համարում էին ներդաշնակութեան հաստատման եւ վերականգնման ազդեցիկ միջոց: Պատահական չէ, որ հարմոնիա բառը նեղ առումով նշանակում է լադ (mode), իսկ լայն առումով այն ունի տիեզերքի ներդաշնակութեան իմաստ, առանց որի աշխարհը կը փլուզուէր: Իսկ Երգնկացին մարդուն համարելով փոքր տիեզերք, գտնում էր, որ նրա առողջական վիճակը կախուած է օրգանիզմում առկայ չորս հեղուկների հաւասարակշռութիւնից. «Եւ որպէս մարդ կենդանի՝ ի հոգւոյ եւ ի մարմնոյ ունի զրադկացութիւն, եւ մարմին ի չորից տարեց զիանուած, որ են ի մեզ չորս հիւրք»²⁰:

Ցայտնի է, որ մարդու մարմնի մեծ մասը կազմում է հեղուկը, եւ պատահական չէ, որ բոլորիս քաջածանօթ հումոր բառը ծագել է լատիններէն հստօր-ից, որը բառացի նշանակում է հենրուկ²¹: Քանի որ հումօրը դրական կերպով է ազդում անձի տրամադրութեան վրայ, իսկ դա էլ իր հերթին նպաստում է օրգանիզմի հումօրալ կարգաւորմանը (հումօրալ թերապիա), կանխելով բացում հիւանդութիւնների առաջացումը, ապա հէնց այդ բառով էլ անուանուել է գրական-թատերական այդ սեռը (ժանր): Հանդիսատեսի հոգում ուժգին եւ բուռն զգացմունքներ յարուցելով նրան մաքրագործելու եւ դրա չնորհիւ ապաքիննելու գործառույթ ունէր դեռեւս հին յունական դասական դրաման, ինչ-

¹⁸ Թէ՛ՌԻՒԿ, էջ 243, Գէջ նշանակում է խոնաւ:

¹⁹ Այս մասին տե՛ս ՄՄ, ձեռ № 5373, էջ 29ր, նաեւ՝ Ն. ԹԱՀՄԻԶԵԱՆ, Մի էջ հայկական վաղ միջնադարեան տեսութիւնից. ԲՄ, Երեւան, 1960, № 5, էջ 43-76:

²⁰ Ցովհաննէս Երգնկացի, էջ 100:

²¹ ՏԵ՛ս ՀԱՀ, հ. 6, Երեւան, 1980, էջ 641.

պէս նաեւ հայոց Արտաւազդ Բ.ի հեղինակած պալատական ներկայացումները։ Դա բառութեան զգացումն է (յունարէն՝ կաքարսիս), որը հոգեկան տառապանքի եւ նոյնիսկ մարմնական ցաւի թօթափման լաւագոյն միջոցն էր համարւում²²։

Նշենք, որ հայկական միջնադարում ընդունուած է եղել մարդու առողջութեան մասին յոնիական դպրոցի (Պիւթագորաս, Հիպոկրատէս եւ Ալքմէոն) աւանդական ուսմունքը, ըստ որի մարդն առողջ է, քանի դեռ նրա օրգանիզմում պարունակուող չորս հեղուկները (արիւն, դեղին ու սեւ մաղձեր եւ լորձ) գտնուում են ճիշտ համամասնութեամբ, իսկ դրա աննշան խախտումն իսկ կարող է այլազան հիւանդութիւնների ու ցաւերի պատճառ դառնալ։ Հետեւաբար, որեւէ հիւանդութեան բուժման համար անհրաժեշտ է կարգաւորել այդ 4 հեղուկների բալանսը կամ հաւասարակշուութիւնը։ Դառնալով կոմիտասի յօդուածին, կարելի է նկատել, որ նա նոյնպէս փորձում է խորհրդաւոր կապեր գտնել քնարի լարերի անուան, դիրքի ու որակի, չորս տարերքի ու դրանց յատկութիւնների միջեւ, այսպէս։ «Տարերքների անուններով պատկերանում է նոյցա դասակարգութեան աստիճանաւորումները. առաջին դիրքը գրաւում է հոյն իր ծանրութեամբ. երկրորդը՝ ջուրը, իր դիրքութեամբ. երրորդը՝ օդը, իր թերեւուրեամբ եւ չորրորդը՝ հուրը, իր հեռաւորութեամբ. այսպէս՝ երկիրը հիմունքն է, վրան՝ ջուրը, սորա վրան՝ օդը եւ օդի վերայ՝ հուրը։ Իսկ լարերը որքան հաստ են, նոյնիքան ցած են ձայնում եւ որքան բարակ՝ նայնիքան նուրբ։ Քնարի առաջին լարն իր դիրքով համեմատ է երկրին, երկրորդը՝ ջրին, երրորդը՝ օդին եւ չորրորդը՝ հրին. իսկ ձայններանգով՝ տարերքների որակին, որ է՝ ցուրտ, գէջ, ջերմ եւ չոր. այսինքն՝ առաջին լարի ձայներանգն է ցուրտ, որ զգացման աստիճանի պակասութիւնն է ցոյց տալիս, ուստի եւ ցած է լարուածքը. երկրորդի ձայններանգն է՝ գէջ, որ զգացման աստիճանի թուլութիւնն է պատկերացնում, ուստի եւ թոյլ է լա-

22

Պատոնը գտնում էր, որ Քառութիւնը լաւագոյնի զերծումն է վատագոյն նից, իսկ Արխտոտէլն իր Պոետիկայում կաթարսիսի հասկացութեամբ էր սահմանում արուեստի երկերի, մասնաւորապէս ողբերգութեան հոգեբանագեղագիտական նպատակը։ Այս գաղափարներն առկայ են նաեւ Դիրնիսիոս Թրակացու Քերպիկանութեան արուեստ աշխատութեան մէջ, որն էլ ընկած է Յովհաննէս Պլուտ Երգնկացու խնդրոյ առարկայ Մեկնութիւն ֆերականի երկի հիմքում։ Տե՛ս ՀՍՀ, հ. 3, էջ 300-302։

բուածքը. երբորդի ձայներանգն է ջերմ, որ զգացման շարժումն ու եռանդ է տալի, ուստի եւ աւելի ամուր է լարուածքը. եւ չորրորդի ձայներանգն է չոր, որ զգացման աստիճանի սրութիւնն է արտայայտում, ուստի եւ պիրկ է լարուածքը²³:

Անդրադառնալով Երզնկացու ձեռագրի այն հատուածին,ուր խօսւում է հակառակը հակառակով բժշկելու՝ Հիպոկրատեսից Եկող սկզբունքի մասին²⁴, Կոմիտասը գրեթէ տարակուսած հարց է տալիս. «Ինչ է նշանակում այս կամ այն տեսակ հիւանդութիւնը բուժելու համար պէտք է զարնել մէկ կամ միւս լարին, կամ՝ ի՞նչ է նշանակում այսեղ լար բառը: Քնարի մէկ լարին շարունակ հարկանելով, որ նոյնն է, թէ անդադար միեւնոյն ձայնը հնչեցնել, ոչ թէ հիւանդը կը բուժուի, այլ առաւել եւս կը տկարանայ»²⁵: Կոմիտասը գտնում է, որ հին ժամանակներում արեւելեան աւանդապահ ազգերը իւրաքանչիւր ձայնաստիճան համարում էին մի որոշակի ձայնեղանակի հիմք, իսկ դրանցից իւրաքանչիւրի աստիճանները՝ եւս չորսական եղանակի եւ այլն: Բերելով հին քնարի չորս լարի աստիճաններն ըստ Նիկոմաքոսի, եւ դրանցից իւրաքանչիւրին յատուկ ձայնաշարը, նա գրում է. «Թէ ո՞րպիսի շենք ու օրէնք ունեին այս ձայնաշարերի վերայ հիմնուած եղանակները, մեր յօդուածի սահմանէն դուրս է այդ նկարագրելը»²⁶:

Փաստորէն, նա ոչ թէ որոշակի դեղատումս է յայտնագործում այս յօդուածում, այլ իմաստուն կերպով մէջբերում է Յովհաննէս Պղուզ Երզնկացու հետեւեալ միտքը. «Եւ՝ որ ստուգութեամբ հմուտ է արուեստիս կարողանայ երգելովն դիւրութիւն առնել հիւանդին: Եւ ցաւեալն, եթէ հասու է արուեստիս՝ առաւել շահի ի ձայնիցն: Այլ եւ հոգեկան ցաւուց յոյժ օգտակար է, այսինքն, զի ձայնի բնութիւն անմարմին է եւ՝ հոգի անմարմին. լսելով զիւրն ազգակից փոխէ զորտմականն. եւս ըստ այլ մասանց հոգւոյն յարմարի. սրտմուականին, խոհականին եւ կամ ցանկականին»²⁷: Կոմիտասը, ինչպէս եւ Երզնկացին, իրաւացիօրէն գտնում է, որ նախ հմուտ արուեստագէտի

²³ Թէ՛ՌԻՒԿ, էջ 244.

²⁴ Տե՛ս անդ, էջ 244, նաեւ՝ ՄՄ, ձեռ. № 2380, էջ 56ա.

²⁵ Անդ, էջ 244-245.

²⁶ Անդ, էջ 245.

²⁷ Անդ, էջ 245-246.

կատարմամբ պիտի հնչի երաժշտութիւնը, եւ բացի այդ, դրա ունկնդրումը կը թեթեւացնի հիւանդի վիճակը միայն այն դէպ-քում, եթէ վերջինս «հասու է արուեստիս», այսինքն, կարեւո-րում էր թէ՛ օբյեկտիւ, թէ՛ սուբյեկտիւ գործօնները:

Եթէ յիշենք հին յոյներից եւ յատկապէս Արիստոտէլից սե-րող էրոսի (բառացի՝ բնոյր) հասկացութիւնը, ապա կը տես-նենք, որ իրենց հիմնական 8 լադից (4 աւտենտիկ եւ 4 պլադալ, իւրաքանչիւրին վերագրելով մի-մի որոշակի տրամադրութիւն կամ բնոյր, նրանք հաւատացած էին, որ այդ լադերում հնչող մեղեդիները բարերար ազդեցութիւն են ունենում մարդու յուզա-կան աշխարհի, ինչպէս նաեւ առողջական վիճակի վրայ²⁸: Տուեալ լադում ընթացող մեղեդին, համադրուած որոշակի ոիթ-միկայի հետ, ի զօրու է դրական ազդեցութիւն ունենալ մարդու հոգեվիճակի վրայ եւ կանխարգել բազմաթիւ հիւանդութիւններ, յատկապէս այնպիսիք, որոնք կապուած են անձի հոգեկան ոլոր-տի հետ: Պատահական չէ, որ միջնադարեան հայ բժշկապետերը հէնց այս դէպքերում էին երաժշտութիւնը բուժական ազդու մի-ջոց համարում, եւ այն էլ լոկ թեթեւ հիւանդութիւնների դէպ-քում: Իրենց ստուարածաւալ աշխատութիւններում նրանք ընդա-մէնը մի քանի նախադասութեամբ էին անդրադառնում երաժ-տութեան բուժական յատկութիւնների կիրառմանը:

Այսպէս Կիլիկեան Հայաստանի բժշկական դպրոցի հիմնա-դիր, ԺԲ. դարի անուանի բժշկապետ Միսիթար Հերացին իր «Զեր-մանց միփարութիւն» հանրայայտ երկի տասներորդ գլխում գրում է: «Վասն միջօրեայ զերմանն, որի պատճառն հոգսն եւ տրտմութիւնն լինի: Նկարագրելով հիւանդութեան ախտանիշնե-րը, նա հետեւեալ բուժումն է առաջարկում: Եւ իւր ստածումն այս է, որ ընդ խաղ եւ կատակ եւ ամենայն իրք ուրախութիւն քերէ եւ զմբաղի: Եւ որչափ կարէ՝ գուսանի եւ լարի եւ անուշ եղանակաց ձայն լսէ: Եւ ի յայն իրվին զմբաղի, որ ցներքսէ ուրախութիւն քերէ»²⁹:

Իսկ ԺԵ. դարի հայ մեծանուն բժշկապետ Ամիրդօվլաթ Ա-մասիացին իր «Օգուտ բժշկութեան» աշխատութեան (Տումար

²⁸ В. П. Шестаков, Музыкальная эстетика западной Европы, XVII-XVIII вв., Москва, 1971, с. 188.

²⁹ Միփարայ Բժշկապետի Հերացւոյ Զերմանց միփարութիւն, Վենետիկ, Ս. Ղազար, 1832, Գլուխ Ժ, էջ 18:

բժշկութեան) բաժնում նմանատիպ հիւանդութեան դէպքում առաջարկում է. «Ամէնօրեայ զերմն որ ի բարկանալոյ եւ ի հոգսէ լինայ, թնաւ գինի մի՛ խմիր, եւ զբնութիւնն խնդրութեամբ եւ գուսնով անուշցուր, մինչեւ աղէկ լինայ»³⁰: Կամ՝ Ամէնօրեայ զերմն որ ի տրտմութենէ եւ ի հոգսէ եւ ի շատ ցաւոց լինի... Ստածումն տրտմութենէ լինայ: Դեղն այն է, որ զիւտանդն գուսանօֆ խաղեցնես, եւ ի ջրեզեր տանիս եւ խընդացնես, եւ ի կանաչ տեղեր. եւ զայն իրվին առնես որ անձն խնդրայ եւ հոգին»³¹:

Նկատելի է, որ երաժշտութիւնը կիրառւում է մարդու տրամադրութիւնը բարձրացնելու եւ հոգսն ու տրտմութիւնը վանելու, այսինքն՝ հիւանդութեան պատճառը վերացնելու համար: Այսպիսով, Յովհաննէս Պլուզ Երզնկացին անհամեմատ աւելի խորութեամբ է անդրադարձել երաժշտաբուժութեան հարցերին: Լինելով ոչ միայն հմուտ երաժիշտ ու երաժշտագէտ, այլեւ փիլիսոփայ, բժիշկ ու բնագէտ, նա համադրում է այս բոլոր բնագաւառներում ունեցած իր բազմակողմանի գիտելիքները, կատարելով շատ ուշագրաւ համեմատութիւններ եւ յանգելով հետաքրքիր եղբակացութիւնների: Ահա թէ ինչ է գրում Արմէնուհի Երզնկացի Սրապեանը նրան նուիրուած իր մենագրութեան մէջ. «Երաժշտութիւնը համարելով մեծ արուեստ, Երզնկացին նկատում է նաեւ, թէ պարի, երգ ու երաժշտութեան զօրաւոր ու ներգործուն ուժը արքեցուցիչ է եւ ընդունակ յարուցելու ոչ միայն դրական՝ ազնիւ ու գեղեցիկ զգացումներ ու յոյզեր, այլեւ չար գրգիռներ, հասցնելով նոյնիսկ մարդապանութեան, եթէ միախառնեում են գինարբութի: Իր ասածը հիմնաւորելու համար, նա օրինակ է բերում Հերովդէս թագաւորի կազմակերպած խնջոյքը, ուր նրա դուստրը՝ «Հերովդիարա խաղաց...: Գինին ընդ բերանն արքեցոյց եւ գուսանն՝ ձայն ընդ ականջն, եւ խաղին տեսն՝ ընդ աչքն եւ... Յովհաննու սպանող եղեն»³²:

Ուրեմն միշտ չէ, որ խնջոյքն, պարն ու երաժշտութիւնը ծառայում են բարի նպատակների: Յովհաննէս Երզնկացին ոչ

³⁰ ԱՄԻՐԴՈՎԼԱԹ ԱՄԱՍԻԱՑԻ, «Օգուտ քժկութեան», Մասն երկրորդ, գիրք բժշկութեան Տումարի, Երեւան, 1940, գլ. ՄԵ., էջ 485.

³¹ Անդ, Գլ. ՄԵ., էջ 489:

³² ԱՐՄԵՆՈՒՀԻ ԵՐՁՆԿԱՑԻ ՄՐՁՆԿԱՑԻ ՄՐՄՊԵԱՆ, էջ 118:

միայն գեղագէտ է, այլեւ գեղեցիկ արուեստների հանդէպ ունէր առանձնայատուկ վերաբերմունք: «Եւ զի՞նչ է արուեստն, քանի թէ յառաջնախնամ տեսութեամբ եւ գիտութեամբ իմաստութեանն առնել զամենայն ինչ ի ժամանակի իւրում եւ ըստ պատշաճի... Առաջին, զի ըստ ժամանակի եղեալքն բաղցը եւ ախորժելի թուին, որպէս գեղեցիկ է ծագումն արեւու՝ յետ տիրատեսակ ամպոյ եւ ախորժելի առողջութիւնն՝ յետ հիւանդարար ցաւոցն, եւ բարի է լոյս՝ յետ մթութեան խաւարի...»³³:

Այսպիսի պատկերաւոր համեմատութիւններ կարող է անց կացնել միայն մեծ գեղագէտը: Նա գիտութեան իմաստութիւնն էլ արուեստ է համարում, եւ դրա մէջ մտնում է նաեւ բժշկութիւնը: Երզնկացին Հիպոկրատէսի այն հետեւորդներից է, որոնք համոզուած էին, որ հարկաւոր է բուժել ոչ թէ հիւանդութիւնը, այլ հիւանդին, եւ ոչ միայն մարդու մարմինը, այլեւ հոգին: Զարգացնելով այս միտքը, կարելի է ասել, որ գեղեցիկ արուեստը անհրաժեշտ է նախ եւ առաջ առողջ մարդուն: Հրաշալի երաժշտութիւն ունկնդրելով համար բնաւ էլ պարտադիր չէ հիւանդ լինել. բժշկութեան հայր Հիպոկրատէսն ասել է, որ աւելի դիւրին է կանխարգելել հիւանդութիւնը, քան բուժել այն: Նա գտնում էր, որ իւրաքանչիւր մարդ իր աստրոլոգիական, աշխարհագրական եւ անձնական տուեալներով կանխամիտուած է ինչ-որ հիւանդութիւնների հանդէպ: Իսկ երաժշտութիւնը կարող է յաջողութեամբ կանխել այդ հակումները եւ ապահովել անձի առողջութիւնը:

Վաղուց ի վեր յայտնի է, որ երաժշտութիւնն ազդում է ոչ միայն մարդու, այլեւ կենդանիների ու բոյսերի վրայ: Առասպելական երաժիշտ Օրփիսի նուազով յափշտակւում էին նոյնիսկ վայրի գաղանները: Նշանակում է, որ նոյնիսկ անկախ ենթակայական գործօններից (անձնական ճաշակից եւ այլն), երաժշտութիւնը առարկայօրէն ազդում է կենդանի՝ օրգանիզմի ֆիզիոլոգիայի վրայ. Ցիշտ ընտրուելու դէպքում այն կարող է կարգաւորել արեան զարկերակային ճնշումը, սրտի աշխատանքի արագութիւնը (տախիկարդիան), շնչառութիւնը դարձնել համաշափ վերացնել դեպրեսիան, անքնութիւնը, նեւրոզներն ու սթրեսները:

Յայտնի է, որ հոգեւոր երաժշտութիւնը առաւել մօտ է մարդու հոգեւոր ոլորտին, իսկ եկեղեցում այն ունկնդրելը ար-

³³ Անդ, էջ 119.

դէն բարերար է անդրադառնում մարդու հոգեվիճակի վրայ, քանի որ եկեղեցիները հիմնականում կառուցւում են ոչ թէ պատահական վայրերում, ինչին գումարում է նաեւ եկեղեցու սրբազն հանգամանքը, յատուկ ակուստիկան, խունկի բոյրը, որ մըշտապէս առկայ է հայոց եկեղեցում, եւ յայտնի է իր հականեխիչ ու բուժիչ յատկութիւններով:

Իսկ ինչ վերաբերում է հայկական շարականներին, ապադրանք հիմնականում մեծ մասսամբ երաժշտական աղօթքներ են, որոնք ստեղծել են մեր ազգի տաղանդաւոր երգահանները, եւ որոնց հիմքում ընկած են եկեղեցական ութ հիմնական ձայնեղանակներով (4 Ձայն եւ 4 Կողմ): Հայր Ղեւոնդ Ալիշանը «Շնորհալի եւ պարագայ իւր» գրքում գրում է. Յամաւուրքն Ս. Սահակյայ համար կ'ըսէ, թէ 10 ձայն բաժնեց եղանակները, եւ աղուարար կ'աւելցնէ, «ըստ բուոց տասն արարածոց (!) 'ի չորից ձայնից 10 բարդեցաւ. եւ չորս ձայնից 'ի չորս տարեցս ունին զգայունեն. որպէս եւ ա ձայնն 'ի հողոյն, եւ բ-ն 'ի ջրոյն, գ-ն 'ի յօդոյն, դ-ն 'ի հրոյն. եւ 'ի չորս ձայնիցն՝ բաժանեաց չորս կողմ. (եւ) Վառ եւ Վերջ երկու ստեղին»:³⁴ Մասն ցից իւրաքանչիւրում հնչող մեղեդիներն ունեն իւրայատուկ երաժշտական յատկանիշներ ու երանգներ, եւ ի զօրու են ունկնդրի մէջ առաջացնել բազմազան յոյզեր ու զգացմունքներ:

Նոյնիսկ օտարազգի ունկնդիրները, առանց հայկական հոգեւորի տեքստը հասկանալու, երբեմն այնպիսի յուղումներ են ունեցել, որ սկսել են լրջօրէն հետաքրքրուել, թէ ի՞նչ երգ է դա, ինչի՞ մասին է, եւ ինչպէ՞ս է, որ այդքան անդիմադրելի ազդեցութիւն ունի նաեւ օտարների վրայ. Բազմավէպում բազմաթիւ վկայութիւններ կան նմանօրինակ դէպքերի մասին, եւ մասսամբ այդ պատճառով էր, որ 20-րդ դարի կէսերին վենետիկի Մխիթարեան միաբանութեան անդամ, Գ. Ղեւոնդ Տայեանը ձայնագրեց եւ երոպական նոտաներով լոյս ընծայեց հայոց Շարակնոց ժողովածուն, որոնց տեքստերը գրառուած են նաեւ լատինատառ, որպէս զի օտարները նոյնպէս կարողանան բառերով հանդերձ երգել դըրանք:³⁵ Նշենք, որ բնաւ պատահական չէ այլազդի ունկնդիրների

³⁴ Շնորհալի եւ պարագայ իւր, գրեաց Հ. Ղեւոնդ Մ. Ալիշան Վ. Մխիթարյան; Վենետիկ-Ս. Ղազար, 1873, էջ 88, տե՛ս նաեւ Կոմիտաս, յօդուածներ եւ ուսումնասիրութիւններ, Երեւան, 1941, էջ 114.

³⁵ Ա.ԲՓՒ ՎԱՐԴՈՒԽԵԱՆ, Ուշ միջնադարեան հոգեւոր երաժշտութեան Վենետիկի պարուցն ըստ Հայր Ղեւոնդ վրդ. Տայեանի Ձայնագրեալ Շարակ-

այսօրինակ հետաքրքրութիւնը հայկական հոգեւոր երգեցողութեան հանդէպ, քանզի դրա լաւագոյն նմոյշներն իրաւամբ կարելի է դասել համաշխարհային երաժշտական գանձերի կարգին:

Անշուշտ, այդ հոյակերտ ստեղծագործութիւնների բարձրարուեստ կատարումները, գեղագիտական հաճոյք պատճառելով հանդերձ, կարող են ամոքել թէ՛ հայերին, թէ՛ օտարներին, ինչպէս նաեւ կանխել բազում հիւանդութիւններ: Ժամանակակից մարդը գերյագեցած ու յոգնած է քիմիական ծագում ունեցող թանկարժէք գեղամիջոցներից, քանի որ օգուտի հետ միասին դրանք յաճախ նաեւ վնասում են այլ՝ առողջ օրգաններին, առաջացնելով բարդութիւնների անվերջ շղթայ: Սրա հետեւանքով այժմ առաւել բարձր զարգացած երկրներում շատերը գերադասում են դիմել բուժման այլընտրանքային մեթոդների, որոնցից է արուեստի եւ մասնաւորապէս երաժշտութեան բուժական կիրառութիւնը կամ դրա համարումը այլ մեթոդների (օրինակ՝ ասեղնաբուժութեան կամ բոյրաբուժութիւն):

Երաժշտաբուժութիւնը տարբեր երկրներում յաջողութեամբ օգտագործում է նաեւ որպէս յաւելեալ բուժամիջոց թէ՛ հոգեբուժութեան ու հիպնոսի, թէ՛ ատամնաբուժութեան, թէ՛ մասնակի ցաւազրկմամբ վիրաբուժութեան, թէ՛ ֆիզիոթերապիայի, թէ՛ մարզանքի, յատկապէս աերոբիկայի համարութեամբ: Ժամանակակից մեծ քաղաքներում մարդու կեանքում այնքան են շատացել վնասակար գործօնները, որ այժմ ամենակարեւորը դարձել է Հիպոկրատիսի «մի՛ վնասիր» պատգամը: Իսկ երաժշտաբուժիւնը, ճիշտ կազմակերպուելու պարագայում, ի գօրու է առանց վնասելու դարմանել բազմաթիւ հիւանդութիւններ, ինչպէս նաեւ նպաստել որոշ հիւանդութիւնների առաջացման պատճառների վերացմանը: Այն որքան հին է իր ծագմամբ, նոյնքան էլ արդիական է իր ներուժով եւ հեռանկարային՝ իր անսպառ հնարաւորութիւններով:

ԱՐՓԻ ՎԱՐԴՈՒՄԵԱՆ

Առցի, Մաս Ա, Բազմավէպ, 2005, էջ 379-393, եւ նոյնի Մաս Բ, Բազմավէպ, 2006, էջ 536-51:

Music-therapy in Medieval Armenia

ARPI VARDUMYAN

(summary)

Music-therapy studies the various connections of medical science with the art of curing by means of melody and rhythm. The positive influence of music upon human health has been discovered in most ancient times and is reflected in Indian Vedas, Greek treatises, Eastern medicine.

In Ancient Greece healing methods by using melodies of each musical *mode*, in correlation with certain rhythms, had been developed for different diseases, during many centuries. The Pythagoreans treated music as a powerful means of *harmony*, identifying the latter with mode, and in a wider sense - with Universe harmony. Aristotle created the theory of *ethos* - the character of the eight modes each somehow affecting the emotional world of a human being.

In Armenian medieval science the traditional theories of music therapy were derived by the great philosopher David the Invincible who, in his turn, adopted them from scholars of the Ionic School (Pythagoras, Hippocrates, Alcmeon). Their basic concept had taken its sources from the methods of *humoral therapy* and the principle of antithesis in medicine. According to this method the balance of four liquids - *blood*, *lymph*, *mucus*, and *bile* in the organism, keeps the body in health, and even a slightest breach of the natural state of health may lead to various pains and illness as a result. The only true way to avoid such consequences is to keep the liquid balance in the organism.

In 1915 the great Armenian composer and musician Komitas wrote an article entitled 'Medical Treatment by Music', in which he aimed to attract attention to a medieval manuscript kept in the Library of Etchmiadzin (the Holy Center of all Armenians). The manuscript elucidated the relaxing and, thus, healing influence of spiritual music, especially church music upon the human soul and body. This manuscript is now in Matenadaran - the Research Institute of Ancient Manuscripts in Yerevan.

The analytical and comparative study of the above mentioned and some other manuscripts certify that their author was Hovhannes Plouz Erznkatsi - an eminent philosopher, grammaticist, musician and physician of the thirteenth century. His 'Commentaries upon grammaticist' is a research of 'Grammar Art' by the famous Greek grammarian of the second to first centuries, Dionysius Thrax. This investigation served as a grammar-book during the entire Byzantine age. It was translated into Armenian among the first books after the Bible.

Hovhannes Erznkatsi has not only commented on the book but also introduced very important ideas about the interconnection between health and *melody types*: four *authentics* and four *plagals*. When the proportion of four liquids is violated, the four melody tones can help balance the physical and mental state, and recover the patient's health.

The methods of music therapy are nowadays being developed in many countries. They bear the main idea of medicine coming from ancient times and are best expressed in the famous words of Hippocrates, 'Do not harm'. The health care of the future must take into consideration the more harmless approaches of traditional and non-traditional medicine reducing to a minimum the use of chemicals, and among them will surely be music-therapy.